ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 42

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13.-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
11-003-0000-0000 կադաստրային ծածկագրով 0.6 հա մակերեսով հողամասից 11-003-0711-0013 կադաստրային ծածկագրով 0.04319 հա մակերեսով բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողեր և 11-003-1466-0001 կադաստրային ծածկագրով 0.24558 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր	11-003-0000-0000 կադաստրային ծածկագրով 0.6 հա մակերեսով հողամասից 11-003-0711-0013 կադաստրային ծածկագրով 0.04319 հա և 11-003-1466-0001 կադաստրային ծածկագրով 0.24558 հա մակերեսներով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, « 02 » «մարտի» 2022թ.